

5 Նա եւ մարմնապէս իսկ զանթիւ իբազմութեան խոստումնն զաւակին² ընդունէր. ³որով ճանապարհաւ իսկ միանգամայն զժանդագործ⁴ երկիրն⁵ Սողոմացոց⁶ խրատեալ կուրացելովքն. ապա ի չհաւանելն՝ իջուցեալ կրակաբեր անձրեւս, եւ աստուածասաստ բարկութեամբն⁷ համառաւոտ դատեալ⁸:

6 ⁹Եւ յետ ¹⁰այսորիկ կատարեալ նմա զխոստումն¹¹ զաւակին, զի¹² տուաւ նմա որդի Իսահակ: 7 Եւ դարձեալ երեւի Աստուած¹³ Աբրահամու, առ ի պատարագել զփորձական¹⁴ զոհն¹⁵ զԻսահակ, ¹⁶որով զաւետիս¹⁷ հանդերձելոցն¹⁸ ընկալաւ¹⁹: 8 Նոյն ակրինակ եւ ²⁰առ Իսահակ որդին Աբրահամու երեւեալ, ²¹հայրենի զինքն յուշ առնելով Աստուած:

9 Իսկ առ ²²Յակոբ որդին Իսահակայ՝²³ եւս սքանչելագոյն²⁴ սանդղածել²⁵ երկնաբերձ²⁶ տեսլեամբ հանդերձ ամենայն ²⁷հրեշտակաւք՝ Տէրն ծանուցեալ երեւի²⁸, եւ²⁹ երբեմն իբրեւ զայր մի ³⁰սոսկագոյն՝ զիշերամարտ մե-

1 abd բազմութեան [b բազմութիւնն] խոստումն [d խոստումնն] / ԱԲ բազմութեանն զխոստումն

2 ԱԲ զաւակաց

3 b որով եւ ... միանգամ

4 a զժանտագործ / bԱԲ ժանդագործ

5 bԱԲ երկիրն

6 ab սողովմայեցոց

7 b հրամանաւն, փխ. բարկութեամբն

8 b դատել

9 Ա յետ (յ՝ կարմրադեղ), փխ. եւ յետ

10 ad այսորիկ կատարեալ / bԱԲ այսորիկ եղեալ կատարեալ

11 bdԱԲ խոստումն / a զխոստումն

12 bdԱԲ չիք զի

13 abd չիք աստուած

14 d զփոխանակ, փխ. զփորձական

15 abd զոհն / ԱԲ զզոհն / v զհոյն

16 b սահակաւ / ԱԲ չիք որով ... ընկալաւ

17 a զաւետիսն

18 d դարձելոցն, փխ. հեղեղեղեղոցն

19 ad ընկալեալ եր

20 abd առ սահակ / Բ չիք առ

21 b հայրենի զինքն յուշ առնելով աստուած / adԱԲ զհայրենի զինքն աստուած յուշ առնելով [ԱԲ առնել]

22 a յակովբ որդին

23 ad սահակայ

24 b սքանչելապէս

25 a սանդղխտածել

26 b երկնաբարձ

27 a հրեշտակաւք երեւեալ եւ երբեմն / d հրեշտակաւք երեւի եւ երբեմն

28 b երեւէր

29 bԱԲ չիք եւ

30 abd սոսկագոյն, զիշերամարտ / ԱԲ սոսկագոյն եւ երբեմն զիշերամարտ